26ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 7140 — 3 ՅՈՒԼԻՍ 1909 — ՈՒՐԲԱԹ — 16 Juillet 1909 — 26me année — N° 140

"ԱՐԵՒԵԼՔ„
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԳԱՐԵԳԻՆ ՊՈՅԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, ԳԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. Պոլսոյ համար տարեկան 80 Ղ.
» » վեցամսեայ 45 »
Դուրսը համար տարեկան 108 »
» » վեցամսեայ 60 »
Օտար երկիրներու համար տարեկան 35 Ֆր.
» » վեցամսեայ 20 »
Թղթատարի ծախքը մեր վրայ

10 ՓԱՐԱՏ

Արեւելք

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ

10 PARAS

آره‌ولك
ارمنیجه یومی و سیاسی غزته
صاحب امتیازی قره‌کین بویاجیان
درسعادت غلطه

ARÉVELK
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons/ple, Galata

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հանեայեն յուլիս 2 թիւով (Ն. Տ.) հեռեւեալը կը գրէ «Թան»ի թղթակիցը.

Տէրութեանց Հանեայի ներկայացուցիչներուն հաղորդուած ըլլալով թէ միջազգային զինուորները մօտերս պիտի հեռանան կղզիէն, ուշեցի իմանալ առժամեայ կառավարութեան անդամ և երկրին քաղաքական ամէնէն ազդեցիկ մարդերէն Պ. Վէնիզէլոսի զգացումները կացութեան մասին և իր դուշակութիւնները Կրետէի ժողովրդեան ապագայ ընթացքին վրայ։ Պ. Վէնիզէլոս սա յայտարարութիւնը ըրաւ.

*«Դուք ալ անձամբ հաստատեցիք թէ բացարձակ հանդարտութիւն կը տիրէ մեր մէջ։ Բարեկարգութիւնը և անդորրութիւնը վերջնականապէս ապահովուած են. իսլամ ժողովրդեան իրաւունքները կատարելապէս երաշխաւորուած են։ Պաշտպան տէրութիւնները, իրենց զինուորները ետ քաշելով, կը ճանչնան թէ ամբողջովին լրացուցուած են այն երկու պայմանները որոնց առորդասած էին իրենց զինուորներուն ետ քաշելը։ Վստահութեան այդ ցոյցին մենք արժանի եղանք։ Միանգամայն Եւրոպայի կողմէ բարեացակամութեան հաւասարք մըն է և քաշելերութիւն մը ապագային համար։ Պատճառներ ունինք յուսալու որ տէրութիւնները հիմա կը քննեն կրետական խնդիրը այն միեւնոյն արդարութեան ոգիով զոր ցարդ ունեցան մեզ նկատմամբ, նկատողութեան առնելով երկրին ազգային տենչանքները և միջազգային տեսակէտով անոր համար առաջ եկած վիճակը։ Եւրոպական լրագիրներէ ոմանք վերջերս անտեսեցին այդ վիճակը։ Թերեւս անպատեհ չըլլայ զայն ճշդել համառօտակի։ Դիտէք թէ տասերկու տարիներ անցած են այն օրէն ի վեր երբ 1896ի կարգադրութեան կիրառմանը մասին Բ. Դրան մերժումին, Եւրոպայի ծրագրած բարեկարգումից վիժելուն և 1897ի ապստամբութեան հետեւանքով վեց մեծ տէրութիւնները զինուորական կերպով կղզին կը գրաւէին և Թուրքիոյ կը զեկուցանէին, մինչդեռ միւս կողմէ կը հռչակէին Կրետէի մէջ թէ որոշած են կղզին օժտել դրական ինքնօրինութեամբ մը, ջնջելով Թուրքիոյ որ և է միջամտութիւնը կղզիին ներքին գործերուն մէջ։ Տասնըմէկ տարի է այն օրէն ի վեր երբ, Գանտիայի ջարդերէն ետքը, պաշտպան չորս տէրութիւնները իրենց որոշումը գործադրեցին՝ վերջնագրով մը Թուրքիան պարտաւորելով կղզիէն ետ քաշելու իր զինուորական ու նաւային զօրութիւնները. օսմ. տիրապետութեան ամէն հետք վերցուցին, և միւս կողմէ մասնակի գոհացում մը տուին Կրետացիներու ազգային բաղձանքին, երկիրը կառավարելու պաշտօնը յանձնելով Յունաստանի թագաւորին զաւակներէն մէկին։ Զօրս ամիս ետքը հռչակուեցաւ կրետական Սամանադրութիւնը, որուն Ա. յօդուածը կը տրամադրէ.— «Կրետէ յաբակից կղզեակներով կը կազմէ կատարեալ ինքնօրինութիւն վայելող Պետութիւն մը՝ չորս մեծ տէրութեանց կողմէ հաստատուած պայմաններով»։ Այդ պայմաններն էին Սուլթանին անուանական գերիշխանութեան պահպանումը՝ խորհրդանշուած օսմ. դրօշով որ կը ծածանի Սուսայի կղզեակներէն մէկին վրայ, և հաստատումը դրութեան մը որ հաւասար պաշտպանութիւն մը ապահովէ ժողովրդեան բոլոր տարրերուն։ Կրետական Սամանադրութիւնը, որ տէրութեանց հաւանութեանը արժանացաւ, այդ կերպով բացորոշապէս ճշդեց կղզիին միջազգային կացութիւնը։ Անկէ յետոյ ինքնօրէն Պետութեան մը քաղաքական կեանքը ունեցաւ և Բ. Դրան միջամտութենէն անկախաբար յեղաշրջեցաւ թէ՛ ներքին գործերու և թէ երկրին արտաքին յարաբերութեանց մէջ, և Թուրքիա միջամտութեան մասին պահանջում մը ընելն իսկ միտքէն չանցուց։ Ինքնօրինութեան առաջին տարին կրետական կառավարութիւնը ուղղակի յարաբերութիւններ հաստատեց բոլոր երկիրներու հետ. նաւեւ դաշնադրութիւններ կնքելու իրաւունքը ունեցաւ։ Այդ կերպով էր որ, օրինակի համար, 1900ին վեց մեծ տէրութեանց ներկայացուցիչներուն հետ կնքեց պայմանագրութիւն մը՝ «քարիդիւլասիոն»ներու կիրառումը կարգադրող՝ Կրետէի մէջ դատական դրութեան մասին։ Արդէն Թուրքիա ալ ճանչցաւ Կրետէի մէջ առաջ եկած վիճակը, քանի որ 1900ին մաքսային տեսակէտով կղզին համահաւասար նկատեց միւս երկիրներուն՝ օտար ներածումներու սակացոյցը գործադրելով Կրետէի արտադրութեանց համար։ Կրետական Պետութեան կացութիւնը կարգ մը տեսակէտներով աւելի անկախ է պալքանեան իշխանապետութենէն, օրինակի համար Պուլկարիայէն։ Կրետէ բնաւ հարկատու չէ եղած Թուրքիոյ, ինչպէս Պուլկարիա էր Պերլինի դաշնադրութեամբ։ Միւս կողմէ Պուլկարիոյ իշխանին պուլկարական Ազգային Ժողովին կողմէ ընտրութիւնը պէտք էր վաւերանալ Սուլթանին կողմէ, մինչդեռ կրետական պետին անուանումը մի միայն կը ղեկուցուէր։ Կրետական Պետութիւնը օսմ. կայսրութեան միացնող կապը արդէն շատ նուրբ էր երբ 1906ին պաշտպան տէրութիւնները, Թէրիսոյի շարժման և անոնց յետոյ կատարուած միջազգային քննութեան հետեւանքով, որոշեցին բարեկարգումներ որոնք քաղաքական խիստ զօրաւոր կապեր հաստատեցին Կրետէի և Յունաստանի միջեւ։ Արդարեւ ներներշնչուելով, — ինչպէս կ'ըսէին 1906 յուլիս 10/23ի իրենց ծանուցագրին մէջ, —իրենց պատուիրակներուն առաջարկներէն, անոնք «հնարաւոր դատեցին աւելի ազգային իմաստով մը ընդարձակել կղզիին ինքնօրինութիւնը»։ Հելլէն սպաներուն անուանումը ոստիկան-զինուորներուն և քաղաքական զինուորներուն հրամանատարութիւնն ստանձնելու համար, բարեկարգութիւնը հաստատուելուն պէս եւրոպացի զինուորներն հեռացնելու խոստումը, նոր բարենորոգումները կը ձեւացնէին կարեւոր հանգրուան մը դէպի վերջնական լուծումը։ Տէրութեանց ծանուցագիրը կ'աւելցնէր նաեւ թէ «Կրետացիներուն ազգային իղձերուն իրականացման մէջ դէպ առաջ ամէն քայլ կախում ունէր բարեկարգութեան պահպանումէն»։

Քիչ յետոյ, 1906 սեպտեմբեր 14ին, ծանուցուած էր կրետացի ժողովրդեան թէ «պաշտպան տէրութիւնները, որպէս զի յայտնեն իրենց փափաքը հնարաւորութեան սահմանին մէջ կրետացի ժողովրդեան բաղձանքները ի նկատի առնելու և գործնական կերպով ճանչնալու այն հոգածութիւնը զոր Յունաց թագաւորը միշտ պարտի ունենալ Կրետէի բարօրութեան համար, համաձայնութեան յանգած են առաջարկելու Ն. Վենիզելոսի թէ այսուհետեւ ամէն անգամ որ Կրետէի բարձր քոմիսէրի պաշտօնը պարապ ըլլայ, Ն. Վենիզելոսը, Աթէնքի մէջ պաշտպան պետութեանց հետ դաշնի խորհրդակցութիւններէ յետոյ, պիտի նշանակէ թեկնածու մը, կարող՝ գործադրելու տէրութեանց ներկայացուցիչի պաշտօնը այդ կղզիին մէջ և իր ընտրութիւնը պաշտօնապէս պիտի հաղորդէ ասոնց»։

Ուշադրաւ կէտ մըն է որ պաշտպան տէրութիւնները այս որոշումները կուտային առանց Թուրքիոյ խորհուրդ հարցնելու, ինչ որ անգամ մը եւս կ'ապացուցանէ թէ իրենց մտքին մէջ ո՞րքան տկար էր օսմ. գերիշխանութեան սկզբունքը։

Բայց ինչ որ լաւագոյնս կը յատկանշէ Կրետէի միջազգային կացութիւնը, այն է որ, 1905 ապրիլ 3ի իրենց հաւաքական ծանուցագրին տրամադրութեանց համեմատ, անոնք խոստացած են «իրենք չկատարել կղզիին միացումը և թոյլ չտալ օրիշ պետութեան մը կողմէ միացումը ընդդէմ բնակիչներու կամքին»։

Այս էր մեր երկրին քաղաքական ըէժիմը, երբ անցեալ հոկտեմբեր 7ին, պուլկարական անկախութիւն յայտարարուելուն լուրը խմացուելուն պէս, Կրետէն յայտարարեց իր միացումը Յունաստանի, և կառավարիչին կողմէ՝ յանուն Յունաց թագաւորին՝ գործադիր յանձնաժողով մը կարգուեցաւ, ինչպէս կը տրամադրէ թագաւորութեան օրէնքը։ Ժողովրդեան որոշումին և զայն վաւերացնելու համար ներկայացուած խնդրագրին ի պատասխան, պաշտպան տէրութիւնները 1908 հոկտ. 28ի իրենց ծանուցագրով կը տեղեկացնէին առժամեայ կառավարութեան թէ «Կրետէին Յունաստանի միացումը կը նկատէին իբրեւ այն տէրութեանց հաւանութենէն կախուած բան մը որոնք պարտականութիւններ ստանձնած են հանդէպ Թուրքիոյ. սակայն և այնպէս տրամադիր են այդ խնդրի մասին խորհրդակցիլ Թուրքիոյ հետ, եթէ բարեկարգութիւնը պահպանուի կղզիին մէջ և եթէ միւս կողմէ իսլամ ժողովրդեան ապահովութիւնը ապահովուի։»

Կը կրկնեմ, Կրետացիները ամբողջապէս լրացուցին այդ պայմանները և վրան առնելով կը սպասեն Եւրոպայի որոշման։ Արդարեւ, քանի որ տասնմէկ տարի է վեր Թուրքիա, վերջնականապէս զրկուած կղզիին վրայ որ և է իշխանութենէ, անուանական գերիշխանութեան իրաւունք մը միայն կը պահէ, քանի որ, միւս կողմէ, տէրութիւնները, կրետական կառավարութեան հետ համախորհուրդ և օսմ. որ և է միջամտութենէ զերծ, միշտ կանոնաւորած ու կատարելագործած են երկրին քաղաքական կացութիւնը՝ Կրետէի մէջ առաջ բերելով Յունաստանի հետ աւելի սերտ կապեր, այսօր շատ լաւ կրնան, առանց անցնելու իրենց կողմէ ասնըմէկ տարիէ ի վեր հաստատուած սահմանները իրենց իշխանութեան համար, որոշել թէ Կրետէ պիտի կառավարուի իրբեւ նահանգ մը հելլենական թագաւորութեան, իր կողմէ ներկայացուցիչներ դրկելով Յունաստանի Երեսփ. Ժողովին։ Սուսայի կղզեակին վրայ ծածանող դրօշին վերցուիլը միայն պիտի վնասէ Սուլթանին անուանական գերիշխանութեանը։ Սակայն այդ առերեւոյթն իրաւունքը անտեսել պիտի չըլլայ երբ այդ դրօշը վերցուի՝ դրամական փոխարինութեամբ մը։ Ո՞րքան ատեն որ Կ. Պոլսոյ մէջ Կրետէն նկատեն իրբեւ ինքնօրէն մէկ նահանգը օսմ. կայսրութեան և ենթարկուած օսմ. գերիշխանութեան, անշուշտ համաձայնութիւն մը դժուարին է։ Բայց այն օրը երբ հակցուի որ Կրետէ, հոկտեմբերին Յունաստանի հետ իր կցումը հռչակելէն շատ առաջ, ամբողջ տասը տարի կազմած է բոլորովին ինքնօրէն Պետութիւն մը, միայն ենթարկուած Սուլթանին գերիշխանութեանը և միւս կողմէ քաղաքական բաղմաթիւ կապերով կցուած հելլենական թագաւորութեան, բանակցութիւնը դիւրին պիտի ըլլայ և անշուշտ պիտի յաջողի։»

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՍԿ ԱՀԱՑԸ

Դ.

Վերջին արիւնհեղ շարժումների պատասխանատուութիւնը ի՞նչքան որ ծանրանում է Մամուռ Ալի Շահի վրայ, աւելի մեծ չափով պատասխանատու է ներկայ արհաւիրքներին պարսկական առաջին տգէտ ու ֆանատիկ մէջլիսը։ Ամիսներ ապարդիւն ժողովներից յետոյ, երբ մէջլիսի անդամներից ոմանք, դիտակցելով որ առանց դրսեցիների աջակցութեան մէջլիսի անընդունակ կը լինի երկիրը կառավարել, մէջլիսում քուէարկեց մի օրակարգ — եւրոպացի տիպլոմատներ և բէֆորմատորներ հրաւիրել պարսկական պետական և վարչական հաստատութիւնները կառավարելու և կարգի դնելու համար. բայց ֆանատիկոսութեան (չովինիզմ) շնորհիւ օրակարգը յետ մղուեց. Պարսկաստանի ճակատագիրը մնաց Շահի և մէջլիսի խնամքին, մինչեւ որ առաջացաւ ընդհարում, մէջլիսի ոմբակոծում և ներկայ արիւնաթաթաւ իրականութիւնը...։

Ակներեւ փաստն իսկ. Բելջիքացիների ձեռքով մաքսատների բարեկարգումը, չկարողացաւ համոզել մեր ազգ. ու ֆանատիկ ուղեղներին երկրի շահը նախատեսել։ Մենք ակնատես եղանք թէ ինչպէս սահմանադրական շարժումների առաջին ռահվիրաները ժամանակի ընթացքում ամենակատաղի հակասահմանադրականները դարձան։ (Պարսկաստանի վերաբերմամբ սահմանադրական և հակասահմանադրական բառերը չպէտք է իրենց իսկական իմաստով ընդունել կամ հասկանալ. Թուրքիոյում ամիսներ իրար հետ պայքար մղող երկու բանակներն էլ իրանց սահմանադրական էին համարում։ Մի՞թ Հայտը, որ առաջին անդամ Թուրքիոյում ապստամբութեան դրօշը պարզեց և իր հետեւորդներով ապաստանեց անգլիական հիւպատոսարանը, ժամանակի ընթացքում անցաւ Շահի կողմը և Թաւրիզում հիմնեց իր տեսակէտով սահմանադրական սէյմ՝ «Անջումանը Իսլամիէ» անունով։ Նոյն իսկ իր օրգանը ունեցաւ, որով հակառակորդ սահմանադրականներին համարում էր անօրէններ, տէրութեան թշնամիներ և ոչ սահմանադրականներ։ Թաւրիզում պայթած այդ երկու Անջումանների պայքարից հետաքրքիր ծաւալ ստացան ներկայ շարժումները. սահմանադրական համարուածները յաղթեցին և կործանեցին «Անջումանը Իսլամիէ»ն, որից յետ կառավարութիւնը իր իսկական դիմակով հրապարակ նետուեց։)

Մամուռ Ալի Շահի առաջին հակառակորդ Միր Հաշումը վերջը Շահի սիրելին դարձաւ և գնաց Թէհրան։ Միր Հաշումի և սահմանադրականների ընդհարման ժամանակ, երբ ամիսներ գիշեր ու ցորեկ որոտում էին հրանօթները, շատ Պարսիկներ իրենց թաղերի անապահովութեան պատճառով ապաստանեցին Հայոց թաղերը և հայ տները։ Հայերը սիրով ընդունեցին իրենց հայրենակիցներին. նոյն իսկ դպրոցներում բաւական ընտանիքներ տեղաւորեցին (ամառնային արձակուրդի ամիսներ էին)։ Այս ստոկ մարդասիրական վարմունքը «Անջումանը Իսլամիէ»ի պաբագլուխ կրօնապետների կողմից նկատողութեան առնուեցաւ և նամակներ տեղացին Հայոց Առաջնորդարան, իբր թէ Հայերը պատսպարում են անիշխանական դաւադիրներին. Առաջնորդի ջանքերի և Թէհրան բրած դիմումների շնորհիւ հազիւ հնարաւոր եղաւ համոզել պարսիկ «Աւտուծոյ պայծանեաներին» որ Հայերի բրածը մի հարեւանական պարտականութիւն է և հայ թաղերում ապաստանածները կանայք, երեխաներ են և ոչ կասկածելի անձնաւորութիւններ։ Ռուսաց հիւպատոսը այս առիթով միջամտեց և նոյն իսկ գրեց որ եթէ հակառակորդ կառավարականներ կան Հայոց թաղում, թող տէրութիւնը ինքը ձերբակալէ կամ հալածէ. եթէ տէրութիւնը այդ ընել չի կարողանում իր զինուորական ուժերով, ի՞նչ կարող է ընել հայ առաջնորդը։

ՎԱՐԴ.

ԹԵՐԹՕՆ "ԱՐԵՒԵԼՔ„Ի (26)

Արփիար Արփիարեան

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ

Ժ.

Ամէն օրուան սովորութեանը համեմատ, զարիպն իր անկողինը՝ որ անկիւն մը դէզ կը մնար՝ բացաւ, երկնցուց, թոթուեց, շտկեց։ Յետոյ, պզտիկ մանդալին մէջ քանի մը ածուխ ալ աւելցուց, և կրակին վրայ զետեղեց պտուկը, որ սոխով լուքիա կը պարունակէր, օրը պահք ըլլալուն։ Սեղանին վրայ կարգադրեց պնակը, դգալը, պատառաքաղը, հացը, ջրին սրուակը և դաւաթը։ Քարտիզի լամբարն ալ մաքրեց պատրաստեց, լուցկիին տուփն ալ քովը դրաւ, ու աթոռը պատուհանին առջեւ քաշելով, ժամու գիրքը առաւ՝ իրիկուան աղօթքները կարդալու։ Քիչ մը ետքը խուցին դուռը բացուեցաւ։ Ժամկոչն էր, որ ետ դառնալով, գնաց ամանդուղին գլուխը սպասողի մը ըսաւ.

—Հրամմեցէ՛ք, հոս է։

Տէրտէրը աթոռէն ելաւ։ Դրսէն մէկը կուգար. քանի մը քայլ անոր ընդառաջեց։

Եկողը ներս մտաւ, դուռը գոցեց. քահանան, վախնալով, ետ ետ գնաց, պատին կռթնեցաւ։ Այցելուն իր առջեւն էր, գիսը հանած, և ծռած՝ ձեռքը կը քաշէր համբուրելու։

—Ես քեզ մեղա՛, Տէ՛ր Հայր, ես քեզ մեղա՛, մրմնջելով։

—Ամէնքս Աստուծոյ մեղայ, օրհնած, ամէնքս Աստուծոյ մեղայ, աղաղակեց տէրտէրը այլայլած ձայնով։ Ու յանկարծ ծունկի յուզմամբ, այցելուին ճակատը քաշեց պագաւ։

Երկուքն ալ թաշկինակնին հանեցին, աչքերնին սրբեցին, ու բոպէ մը իրարու դէմ կեցան մեծ խոնջութենէ մը թեթեւցած սրտով։ Տէրտէրը աթոռին մէկը բերաւ Հայրապետ էֆէնտիին հրամցուց, միւս աթոռն ալ ինքը առաւ, ու դէմ առ դէմ նստան։

—Է՛ նայինք ընտո՞ր էք, աղէկ էք, հարցուց էֆէնտին խանդաղատանքով։

—Փա՜ռք Աստուծոյ, ողջ առողջ ենք. ինչ ըլլայիս յայտնի է։ Ազգին վիճակին ամէնքս ալ բաղդակից ենք։

—Դիտեմ, Տէր Հայր, գիտեմ, ազգին համար շատ բան քաշեցիք։ Աստուած վարձահատոյց ըլլայ։ Զարչարանքը, նեղութիւնը ամէնուս համար ալ է։ Աստուծով ամէն բան կը շտկուի։

Էֆէնտին «ամէնուս համար ալ է»ին վրայ թեթեւ մը շեշտեց։ Անդրադարձաւ որ քահանան կը զգուշանար իրեն բան տարկմանը ս՛և է ակնարկութիւն ընելէ։ Անշուշտ չէր ուզեր զինքը պզտիկ ձգել իր անցեալ ամբարտաւանութեանը համար։ Բայց ինքը՝ վիրաւոր էֆէնտին, սիփսանքի կարօտ էր. ուստի խօսքը ինքը բացաւ։

—Այնպէս է. ամէնքս ալ ազգին բաղդակից ենք։ Մեր գլխուն ալ շատ բան եկաւ։

—Լսեցի, էֆէնտիս, լսեցի, պատասխանեց տէրտէրը անկեղծ վշտակցութեամբ։ Ի՞նչ ընենք ամէնքս ալ Հայ ենք։ Մեր պատմութիւնը ցոյց կուտայ որ այս մահմետականները միշտ մեր մեծերուն գլուխը կ'ուզեն ուտել։ Անշուշտ Յունիկներուն մէջ կրակի տարուան աղէտը կարդացեր էք։

—Կարդացեր եմ, Տէր Հայր։

—Էն առաջ մեր քաջ նախարարները այրեցին, որպէս զի անտէր անտիրական ժողովուրդը դիւրութեամբ կոտրուին։ Միշտ միեւնոյն քաղաքականութեան հետեւած են։

Այս միջոցին Տէր Յուսիկ տեղէն ելաւ, սուրճ պատրաստելու. էֆէնտին թող չէր տար որ նեղութիւն քաշէ։ Բայց դուռը բացուեցաւ. ժամկոչը երկու սուրճ կը բերէր։ Տէր Յուսիկներոցութիւն խնդրեց, որ սիկառ մը չէր կրնար հրամցնել, վասն զի ինքը ծխող չէր։ Էֆէնտին հատ մը գրպանէն հանեց, ու սուրճը խմելով, խօսակցութիւնը շարունակեց.

—Է՛ նայինք, Տէր Հայր, ե՞րբ կը մեկնիք, հարցուց։

—Շիտակը, էֆէնտի որոշ, բան մը չեմ գիտեր։ Մօտերս նոր Պատրիարք պիտի ընտրուի կ'ըսեն։ Կը յուսամ որ Սրբազանը ամէն դիւրութիւն կ'ընծայէ։ Բացակայութիւնս շատ տարի տեւեց՝ ժողովուրդը կը սպասէ։ Ընելիք շատ բան կայ։

—Ի՞նչպէս, իմացա՞ք բան մը. ձեր գեղն ալ դէպք պատահե՞ր է, շատ դրժբաղդութիւններ տեղի ունեցե՞ր են։

—Ահա մասին, փառք Նախախնամութեան, էֆէնտիս. լսեցի որ մեր գեղը անփորձ մնացեր է։

—Ի՞նչ կ'ըսէք. ատ ի՞նչ հրաշք է։

—Էֆէնտիս, մինակ պարզ հրաշք մը չէ։

—Հապա՞։

—Մեր տղաքը ժամանակին խելք ըրած են ու քանի մը հրացան առեր պահեր են, քիչ մըն ալ զինավարժութիւն սորվելով։ Խուժանը դրսէն մեր գեղին վրայ յարձակում ըրած ատենը, տղաքն ալ անոնց վրայ կրակ կ'ընեն, և թշնամականները լեղապատառ կը փախչին։ Երիտասարդները անոնց ետեւէն կը վազեն, ուրիշ հայ գեղերու ալ օգնութեան հասնելով՝ զանոնք ալ փրկեր են։ Ախ, էֆէնտիս, եթէ ամէն քաղաք ու գիւղ ալ ատանկ նախատեսութիւն ունեցած ըլլար, բանիկ մը չէր պատահեր։

Այս տեղեկութիւնը լսելուն՝ էֆէնտին պահ մը մտախոհ, լուռ մնաց։ Կը հաւնար թէ «ժողովուրդի խոհեմութիւնը» զէնք ունենալու և զինավարժութեան մէջ կը կայանայ։ Հետաքրքրութիւնը արթնցաւ, և տէր Յուսիկէն քանի մը տեղեկութիւններ ուզեց։

(Շարունակելի)

ՕՍՄԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Ա. ՆՍՏԱՇՐՋԱՆ

112րդ նիստ 2 յուլիս 1909

Երեսփ. Ժողովը, երէկ, ընդհանուր նիստ ունեցաւ։ Ատենապետ բացուեցաւ ժամ 2ին Ամէտ Բիզա պէյի ատենապետութեամբ։ Ատենապետը նախ յայտարարեց թէ Սուլթանին եղբօրը՝ Սիւլէյման էֆ.ի յուղարկաւորութեանը ներկայ գտնուելով, Երեսփ. Ժողովին անունով ցաւակցութիւն յայտնած էր Սուլթանին, որ պատասխանած էր.— «Շատ գոհ եղայ. շնորհակալ եմ. ցաւերս թեթեւցուցին։» Ապա կարդացուեցաւ Եւրոպա ուղեւորած երեսփխանական պատուիրակութեան անունով Թալաթ պէյի ուղղած մէկ հեռագիրը, որ գոհութեամբ կը ծանուցանէր թէ Ֆրանսայի մէջ պատուիրակութիւնը սիրալիր ընդունելութիւն մը գտած է թէ՛ ըոլոր Ֆրանսացիներուն և թէ մանաւանդ Խորհրդարանին կողմէ։ Այդ հեռագիրը ծափահարուեցաւ և որոշուեցաւ շնորհակալութեան դիր մը ուղղել Ֆրանսայի Խորհրդարանին։ Յետոյ Էնկիւրիի երեսփխան Թալաթ պէյ Ատանայի խնդիրը ձեռք առնելով ըսաւ թէ Ատանայի մէջ ժողովրդեան միջեւ տիրող ատելութիւնը անհանդուրժելի է, և յարեց.—«Պապիկեան էֆ. եկաւ. կառավարական քննիչ յանձ. նախուսը նոյնպէս։ Անշուշտ անոնք պարարտեցին իրենց տեղեկագիրը, և սակայն Ժողովս ոչ մէկ լուր ունի»։

Ատենապետ.—Ըսի որ Պապիկեան էֆ. հիւանդ է։ Յետոյ կը սպասենք Եուսուֆ Բէմալ պէյին, երբ գայ, տեղեկագիրը կը ներկայացնեն։

Թալէաթ պէյ.— Խնդիրը նորէն յուզեցի, որովհետեւ Ատանայէն նամակներ ստացայ, որոնք կը յայտնեն թէ մօլլա ու քահանայ կը փափաքին հաշտութեան։ Այդ բանին համար դիմած են նաև «ԻԹԹիհատ»ի տեղական քոմիտէին։ Հաշտութեանց լաւագոյն առիթը կուգայ անա՛, յուլիս 10ը։ Շատ ժամանակ չկայ արդէն. պէտք է մինչեւ այդ մեծ օրը տեղեկագիրը լսել և հաշտեցնել երկու ժողովուրդները։

Ատենապետ.— Այո, այդ օրը պիտի հաշտեցնենք, ընդհանուր նեռում յայտարարելով։

Վարդգէս էֆ.—Ատենապետն ըսաւ թէ հաշտութեան համար յուլիս 10ին ընդհանուր ներում պիտի յայտարարուի։ Այդ կերպով չի կրնար հաշտութիւն գոյանալ։ Հաշտութիւնը կը ծագի ո՛չ թէ ընդհանուր ներումով, այլ պատժելով յանցաւորները, հատուցանելով վնասները։ Ինչ. արդեօք այսօր դատի կանչուողները թող պիտի տաք վաղը։ Կառավարութիւնը, որ յանցաւոր է այդ դէպքերուն համար, պարտաւոր է 100,000ի փոխարէն 200-300,000 ոսկի ղրկել Ատանա, վերաշինել տուներն ու խանութները, ապահովել զոհերուն ապրուստը, կառուցանել որբանոցներ. ահա՛ այդ կերպով միայն կարելի է կնքել հաշտութիւնը։ Դիտցա՛ եղէք, որ յուլիս 10ի մեր ուրախութիւններուն ու խրախճանքներուն կարմիր դրօշակին վրայ պիտի գտնուի սեւ գիծ մը։ Ատիկա Ատանան է, որուն համար սգալ պարտականութիւնն է ամէն օսմանցիի։

Ատենապետ. — Հաշտութիւնը միայն նիւթական միջոցներով չըլլար, այլև բարոյական։ Թալէաթ պէյը ահա՛ այդ բանին կ'ակնարկէր. բայց Վարդգէս էֆ.ի խիստ լեզուն ուրիշ բանի չպիտի ծառայէ, եթէ ոչ դժուարացնել հաշտութիւնը։

Օրակարգին անցուելով ձեռք առնուեցաւ նախորդ վեհապետին պարտքերու խնդիրը։ Եւմտական յանձնաժողովին կողմէ Էմրուլլահ էֆ. սա յայտարարութիւնը ըրաւ.— «Նախորդ վեհապետը երբ իր երեսուն տարուան ձախող վարչութենէն քաշուելով գնաց, մեզ թողուց աւերեալ երկիր մը, պարապ գանձ մը և 120 միլիոն ղրուշի ալ պարտք մը։ Ատոր փոխարէն թողած ստացուածքներուն և կալուածներուն արժէքը ոչինչ է։ Խեղճ պաշտօնեաները երբ իրենց ամսաթոշակները չէին կրնար ստանալ, գահընկէց վեհապետը չարաթիական հաչով իր դրամը կը ստանար պէտք եղածէն աւելի։ Թէ՛ ատոնց և թէ սղգին հաչուոյն լրտեսներու տրուած դրամներուն գումարները թէեւ երեսուն միլիոնը կ'անցնին, բայց օսմ. արժանապատուութիւնը պահպանելու համար պէտք է հատուցանել այդ պարտքերը։» Իմրուլլահ էֆ. առաջարկեց ներկայացուած օրինագիծը ընդունիլ՝ 50 միլիոն ղրուշի փոխառութիւն մը կնքելու մասին արտօնութիւն տալով կառավարութեան։ Պուսիո էֆ. պարտքին հատուցման պէտքը ընդունելով հանդերձ, փոխառութեան հակառակեցաւ և բաւ թէ նոյն գումարը պէտք է վճարել գահընկէց վեհապետին ստացուածքներէն ու դրամներէն։ Իսմայիլ Սրտգը էֆ. ըսաւ թէ այդ պարտքին հատուցումը եթէ որոշուի, ապէ ետքը երեւան ելելիք պարտքերն ալ հարկ է վճարել։ Զոհրապ էֆ. ալ ըսաւ.— «Մխիթարուած էինք երբ չարժման բանակը ձեռք անցուց նախորդ վեհապետին Երզրգի մէջ ունեցած գոհարեղէնները. դրամները եւայլն։ Այն օրը չկրցանք մտածել և չէինք ալ կրնար մտածել թէ նոյն ձեռնձգութիւնը այս տեսակ արդիւնք մը պիտի ունենայ, վասն զի գրաւման ճամբով չէր որ զանոնք ձեռք անցուցինք, այլ արգելքի տակ դրինք՝ մեր առնելիքը ապահովելու համար. արդարեւ օրինական գործողութիւնները չկատարեցինք, բայց դատարանի մը դիմելով մեր իրաւունքը, գրաւման իրաւասութիւնը կրնանք վաւերացնել տալ։ Հիմա իբրեւ փաստաբան կրնամ ըսել թէ միլիոնները անցնող շատ մը դատեր պիտի բացուին նախորդ վեհապետին դէմ։ Հետեւաբար չենք կարող մեր գանձը դէպի անծանօթ կողմ մը ուղղել։ Այս տեսակէտով կը մերժեմ ներկայացուած օրինագիծը։» Ուրիշ երեսփխաններ ալ խօսելով վիճաբանութիւնը բաւական սառակացաւ այն ատենին որ սովորական ժամէն առաջ ատեանը փակուեցաւ։

Ժամը 2½ին ատեանը վերստին բացուելով նախորդ վեհապետին պարտքերուն վճարման վիճաբանութիւնները շարունակուեցան։ Ժողովը վերջապէս ընդունեց Սէյիտ պէյի մէկ առաջարկութիւնը, որով կ'ըսէր թէ նախորդ վեհապետին պարտքերուն մէկ մասը ստիպողական է, կարեւոր և պարտաւորիչ կերպով վճարելի. իսկ միւս մասը դատական քննութեան մը ենթարկուելու կարօտ է. ուստի օրինագիծը պէտք է ելմտացոյցի յանձնաժողովին վերադարձնել՝ հանգստեան թոշակի բաժինը չվճարող Եըլտըզի պաշտօնեաներուն ու կայս. անձնական գանձէն ամսաթոշակ ստացողներու պահանջներուն և պանքաներու առնելիքներուն նկատմամբ առանձինն մէկ կամ երկու յօդուած աւելցնելու համար. նաեւ նոյն օրինագիծին մէջ նշանակուած ուրիշ պարտքերու մասին ալ յառաջիկային խորհրդակցելու պայմանով։ Յետոյ ձեռնարկուեցաւ գործադուլի և սէնտիքաներու կանոնագրին երկրորդ վիճաբանութեանը։ Ա.էն մինչեւ Զ. յօդուածները՝ նոյնութեամբ ընդունուեցան և Է.ն ալ փոփոխութիւններով։ Ը. յօդուածին համար, որ կը վերաբերի սէնտիքաներու արգելքին, բաւական վիճաբանութիւն կատարուեցաւ։ Սէնտիքաներու կազմութեան կուսակից երեսփխանները դարձեալ պարզեցին իրենց տեսութիւնները։ Տէրսիմի երեսփխան Լութֆի պէյ առաջարկեց որ նկատի առնելով սէնտիքաներու կարեւորութիւնը, գործադուլի կանոնագրին մէջ պէտք չէ ատոր վրայ խօսիլ, այլ կառավարութիւնը պէտք է որ այդ մասին մասնաւոր օրինագիծ մը պատրաստէ ու ղրկէ։ Ատենապետը քուէի դրաւ այդ առաջարկութիւնը, որ ստուար մեծամասնութեամբ ընդունուելով, սէնտիքաներու կուսակից երեսփխաններուն կողմէ ծափահարուեցաւ։ Այդ առաջարկութեան ընդունելութեամբը բնականաբար պիտի ջնջուէր յանձնաժողովին դրած այն յօդուածը որ սէնտիքաներու կազմութիւնը կ'արգիլէ։ Ատենապետը, որ կ'երեւայ թէ սէնտիքաներու կազմութեան կուսակից չէ, նոյն յօդուածին ընդունելութիւնը քուէի դրաւ, սակայն մասնակցողները փոքրամասնութիւն կը կազմէին։ Ատենապետը յայտարարեց թէ մեծամասնութիւն գոյացած է։ Այդ պատճառով աղմուկ ելաւ։ Շատ մը ձայներ «մեծամասնութիւն բնաւ չկայ» կը պոռային։ Լութֆի Ֆիքրի պէյի առաջարկութիւնը ընդունող երեսփխանները կ'ըսէին թէ երկրորդ քուէարկութեան պէտք չկար։ Ժողովին մէջ ընդհանուր ղղագրգռութիւն կը տիրեր. ամէն ոք կը խօսէր, որով բան հասկնալ կարելի չէր։ Ատենապետը թուղթերը հաւաքեց, բեմէն իջաւ և «երբ որ լռէք այն ատեն կուգամ» ըսելով ժողովարանէն դուրս ելաւ։ Պուսիո էֆ. «Ո՛ւր կ'երթաք, ատենապետ էֆ.» գոչեց, բայց պատասխան չստացաւ։ Հետեւաբար ատեանը փակուեցաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ. — Քուրիէ տ'Օրիան, տէրութեանց կողմէ Բ. Դրան տրուած պատասխանին վրայ խօսելով, կ'ըսէ.— «Դոհութեամբ կը տեսնենք թէ Կրետէի վրայ Թուրքիոյ վեհապետական իրաւունքները բացարձակապէս ճանչցուած են։ Բայց միւս կողմէ կը տեսնենք թէ տէրութիւնները մեր ուղած չափովը նկատողութեան առած չեն օսմ. կառավարութեան օրինաւոր բաղձանքները։ Յետոյ կատարուելիք բանակցութեան մը կը վերապահեն կղզիին վարչական վերջնական ձեւը որոշել։ Ինչո՛ւ։ Անշուշտ Թաքուն կարծիք մը ունին Թուրքիոյ ապագային նկատմամբ, և կը սպասեն տեսնելու թէ հաստատուն պիտի մնայ իր սկսած յառաջդիմութեան ճամբուն մէջ։ Այդ վերապահութիւնը միթէ իրական արտայայտութիւնը չէ՞ մեր դիւանագիտութեան անբաւականութեանը և անորոշութեանը։ Մեր արտաքին գործոց նախարարը միթէ կրցա՞ւ պէտք եղածին պէս ըմբռնել կացութիւնը։ Ընդհակառակը, միթէ երկրին չահը չի՞ պահանջեր որ անոր ուրիշ մը յաջորդէ։ Այս է կարծիքը ո՛չ միայն Երեսփ. Ժողովին նրբանցքներուն, այլ աղդեցիկ շրջանակներուն մէջ։ Եղրակացութիւնը շատ դիւրին է։ Եթէ Եպարքոսը կ'ուզէ դարմանել գործուած սխալները և Ռիֆաղ փաշայի դիպլոմագիտական տակրութիւնը, հրաժարելէ գաս ուրիշ ընելիք չունի՝ յետոյ նոր դակիճ մը վերակազմելու աւելի աղդեցիկ և աւելի ճարտար տարրերով։»

—Կրետէէն եւրոպական զինուորներուն մեկնումը հանդիսաւոր հանգամանք մը պիտի ստանայ։ Քաղաքապահ զինուորները և ոստիկան-զինուորները պատիւներ պիտի ընծայեն մեկնող զինուորներուն։ Կղզիին գործադիր իշխանութեան պետ՝ Պ. Միխաէլիտաքիս ճառ մը պիտի արտասանէ։ Եւրոպական զինուորներուն տեղ 700 քաղաքապահներ պիտի հաւաքուին։

—Կրետէի յեղափոխական ժողովը առայժմ պիտի չգումարուի։ Ազգային ժողովը օգոստոսի սկիզբները գումարուելով այդ մասին որոշում պիտի տայ։

—Կրետէի առժամեայ կառավարութիւնը դնած է պաշտպան չորս տէրութեանց զինուորներուն ընակած զօրանոցները։

— Բ. Դուռը, տէրութեանց վերջին ծանուցագրին պատասխանելով, ամէնէն աւելի պիտի պնդէ Սուլթանին վեհապետական իրաւունքներուն վրայ. նաեւ խստիւ պիտի բողոքէ կրետացի Յոյներուն կողմէ վերջին սեպտեմբերի դէպքերուն հետեւանքով առաջ բերուած իրաց վիճակը ճանչցուելուն դէմ։

—Օսմանիէէր Լոյս կ'ըսէ. Կրետէէն Իսլամներու կողմէ ղրկուած վերջին նամակներու նայելով, ատոնք միշտ երկիւղ ունին նոյն կղզեցի Յոյներուն կողմէ կազմակերպուելիք ջարդէ մը։ Ռեթիմոյի մէջ և ուրիշ տեղեր Յոյները արդէն սպառնալից ընթացքի մը կը հետեւին, որով Իսլամները հարկադրուած են Հանեայի ընդհանուր հիւպատոսներուն ուշադրութիւնը հրաւիրել։ Այսու հանդերձ Իսլամները որոշած են կղզիէն չհեռանալ, և հոն մնալ, ինչ որ ալ պատահի։

— Երէկ իրիկուն Բ. Դուռը դեռ լուր ստացած չէր Կրետէէն թէ պաշտպան տէրութեանց վերջին որոշումը ի՞նչ ազդեցութիւն գործած է իսլամ ժողովուրդին վրայ։

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՎԻՃԱԿԸ. — Կ. Պոլսէն կը հեռագրեն Թայմզի.— «Կ'երեւայ թէ, նոյն իսկ իրազեկ միջավայրերու մէջ կարծիքները բաժնուած են սա խնդրոյն վրայ թէ Մակեդոնիայի մէջ երեւցած հելլենական հրոսախումբերը Յունաստանի մէջ քաղաքական մտադրութիւններով լաւ կազմակերպուած ոյժեր են թէ տեղական պարզ կազմակերպութիւններ, որոնք հելլենական դաղտնի կազմակերպութենէն անկախաբար կը գործեն, աւելի իբրեւ ասպատակ քան թէ իրրեւ անդամ քաղաքական կուսակցութեան մը։ Այդ խնդրոյն լուծումը, աւելորդ է ըսել թէ, խիստ մեծ կարեւորութիւն մը ունի։»

—Պելկրատէն հետեւեալ հեռագիրը ստացած է Թան.— «Բոլիդիքա լրագիրը ստացած է Մանասդրէի իր թղթակցէն, որ ընդհանրապէս իրազեկ է, նամակ մը՝ որ նահանգին մէջ կացութիւնը շատ մութ գոյներով կը ներկայացնէ։ Ասպատակներու խումբեր, մանաւանդ Արնավուտներէ կազմուած, անապահովութիւնը ծայրայեղ վիճակի մը կը վերածեն, և յոյն կամ պուլկար քոմիտաճիներու ուրիշ խումբեր ամէն կողմէ իրարու դէմ կ'ելնեն։ Ազդայնութեանց մէջ պառակտումները և ատելութիւնը 1904ի ատիճանին հասած են, թաւական մը երբ սկսաւ փոխադարձ ջնջման պայքարը։ Պուլկար և Յոյն արդէն սկսած են զիրար սպաննել։ Բէրլէբէի կամ Օխրիտայի և Տէպրէի թուրք ժողովրդեան յայտնած դգացումները կ'աւելցնեն մտահոգութիւնները։ Ատոնք կարօտ կը քաշեն հին ռէժիմին և անկեալ վեհապետին։»

ԴԵՐՄԱՆ. Ճարտարագէտներ, կ'ըսէ Թան, մէկ քանի օրէ ի վեր Հալէպ մտմանած են՝ որոշելու Հալէպ-Իսքէնտէրունի երկաթուղիի գիծը, որ Պաղտատի գիծին պիտի կապէ Իսքէնտէրունի նաւահանգիստը։ Այդ ճարտարագէտները իրենց պաշտօնին կիրառմանը միջոցին Պիլանի մօտ յարձակում կրեր են Զէրքէսներու կողմէ։ Ատոր վրայ նոյն քաղաքին դերմանական հիւպատոսարանին դիմեր են, որ անոնց համար ապահովութիւն և յարձակողները ձերբակալելու հրման ձեռք ըներ է։

ՅՈՒՆԱՑ ՊԱՏՐԻԱՐՔԸ. — Բroosnu կ'ըսէ թէ կառավարութիւնը անցեալ օր պատասխաներ է Յունաց Պատրիարքին թագրիրին՝ անոր և Մանմուտ Շեվքէդ փաշայի միջեւ տեղի ունեցած միջադէպին առթիւ։ Կառավարութիւնը կ'ըսէ թէ, պատրիարքական թագրիրը և Մանմուտ Շեվքէդ փաշայի տեղեկագիրը ուսումնասիրելէ ետքը, համոզում գոյացուցած է թէ զօրավարը բնաւ մտադրութիւն չէ ունեցած յոյն ազգը նախատելու։

ՄԱՐՍԱՍՏՈՒՆԸ.— Մոնիթէօր կ'ըսէ թէ խիստ հակողութիւն մը կը կատարուի մաքսատան պաշտօնեաներուն և մանաւանդ գնահատիչներուն վրայ։ Ատոնց մէկ քանին զեղծումներ գործած ըլլալով, ճամբուած են։ Բացարձակ հրամաններ արրուած են պաշտօնեաներուն, որպէս զի գործողութեանց ընթացքը վաճառականներուն կողմէ բողոքներու պատճառ չտայ։

ԹԱՍՈՍԻ ՄԷՋ. — Սելանիկի Զեման լրագիրը ծանուցած էր թէ Թասոսի մէջ կարգ մը խայտառակ անձեր կառավարութեան դէմ անվայել ընթացքի մէջ գտնուած ըլլալով, ցաւալի դէպք մը պատահեր է։ Թանին այդ մասին ներքին գործոց նախարարութեան դիմելով պատասխան ստացաւ թէ այդ տեսակ բան մը պատահած և մարդ մը մեռած է, սակայն հիմա կատարեալ անդորրութիւն կը տիրէ։ Թանին այդ առթիւ կ'ըսէ.— «Բացայայտ տեղեկութիւն մը չկայ թէ դէպքը ի՛նչ կերպով պատահեր է. դէպքը ծանուցաղ հեռագիրը չէ գտնուած. միայն «Փառք Աստուծոյ անդորրութիւնը կատարեալ է»ն զեկուցանող հեռագիրը կայ։ Կ'երեւայ թէ ներքին գործոց նախարարութիւնը դեռ չի կրնար ըմբռնել որ Ապտ-իւլ-Համիտի չրջանին վարչական դրութենէն տարբեր կերպով կառավարութիւն մը պիտի կրնայ ըլլալ։ Դեռ կը շարունակէ խնդիրը ծածկելու և մարդու բան չյայտնելու քաղաքականութիւնը։ Վերջապէս օր մը այդ յոռի վարչութիւնները տեղ մը պայթում մը առաջ կը բերեն. օրինակի համար Ատանայի պէս եղերերգութիւն մը տեղի կ'ունենայ։ Գործը կատարուելէն ետքը ներքին գործոց նախարարութիւնը դարձեալ ապահովութիւն կուտայ թէ գոհութիւն Աստուծոյ անդորրութիւնը կատարեալ է։ Արդեօք ե՞րբ պիտի տեսնենք ներքին գործոց նախարարութեան լոյսի մէջ գործ տեսնելը։»

ԻԶՄԻՐԻ ՅՈՅՆԵՐԸ. — Այտընի կուսակալ Բեազիմ փաշա, շաբաթ մը առաջ, տեղւոյն Յունաց մետրապոլիտը և ժողովականներէն մէկ մասը իր մօտ հրաւիրելով, յանձնարարեց յորդորել ժողովուրդը որ զգուշանայ ցաւալի արդիւնքներ ունենալիք որ և է արարքէ, գիտնալով որ ամէնէն փոքր միջադէպին համար կառավարութիւնը մեծ խստութեամբ պիտի գործէ։

ՀԻՆ ԴՐԱՄՆԵՐ.— Եըլտըզէն գրտնուած ոսկի, արծաթ ու պղինձ հին դրամներ՝ քսան հազարի չափ, երէկ, կայս. Թանդարանը տարուեցան։

ՍԵԼԱՆԻԿԷՆ կը հեռագրեն թէ Պուլկարները, երէկ, միդինկ մը գումարելով բողոքեր են յունական շարժումին դէմ. նաև մերժեր են Կրետէի կցումը, յայտարարելով որ Պուլկարները պատրաստ են Երիտասարդ-Թուրքերուն աջակցելով մաքառիլ հայրենիքին պաշտպանութեանը համար։

ՍՈՒԼԹԱՆԸ, երէկ, բաղմաթիւ հեռեւորդներով Թոփդաբու պալատը գնաց՝ այցելելու նուիրական վայրերու ծածկոցը, որ Կ. Պոլիս բերուած է։ Իրիկուան կողմ Կայսրը Տոլմա Պաղչէի պալատը դարձաւ։

ՌՈՒՍԻՈՅ նախորդ դեսպան Պ. Զինովիէվ վաղը կը մեկնի Կ Պոլսէն։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Սելանիկի Զեման լրագիրը կ'ըսէ.—«Մէսաժբռիի Տանիւբ շոգենաւը, որ Սելանիկի նաւահանգիստը ժամանեց, Պիրէոն ցամաք հաներ է արագահարուած տասնըութ թնդանօթ ու մեծաքանակ ռազմամթերք, հարիւր մնտուկ Կրա հրացան և շատ մը փամփուշտ։ Ստոյգ աղբիւրէ առնուած տեղեկութեան մը նայելով, այդ հրացանները, որոնք հին դրութեամբ են, Յունաստանի կողմէ Պելճիքայէն գնուած են։ Ատոնք Կրետէ ու Մակեդոնիա պիտի դրուին՝ նոյն տեղերուն յոյն ժողովուրդը զինելու համար։»

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—Երեսփխան Պուսիո էֆ. հարցապնդում մը ներկայացուց Երեսփ. Ժողովին՝ կառավարութենէն բացատրութիւն ուզելու Պարսկաստանի խնդրոյն նկատմամբ հետեւած ընթացքին համար, քանի որ Պարսկաստանի դէպքերը կարեւորութիւն կը ստանան։

—Անգլիոյ դեսպանը ու Ռուսիոյ դեսպանատան գործակատարը, երէկ, այդ խնդրոյն վրայ տեսակցեցան Եպարքոսին և արտաքին գործոց նախարարին հետ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ Զեկոյց մը կը ծանուցանէ թէ Սուլթանը գոհունակութիւն կը յայտնէ այն ցաւակցութեանց համար որոնք մատուցուեցան իր եղբօրը մահուան առթիւ։

ԷՐԶՐՈՒՄԻ մէջ ձերբակալուած յեղափոխականները ճամբայ հանուած են դէպ ի Կ. Պոլիս։

ԼԱԹԱՔԻԱՅԻ երեսփխան ընտրուեցաւ Էմիր Մուսթաֆա Արսլան պէյ, փոխանակ իր եղբօրը՝ Էմիր Մէհմէտ Արսլան պէյի, որ յետադիմական շարժումին օրը սպաննուեցաւ։

Ա.ՀԱՄԻՏ ՃԷՎԱՏԻՊ ՊԷՅ.— Նեոլոդոս կ'ըսէ թէ Իզմամի մէջ տարիներով ծառայող թուրք խմբագիրներ և հայ, յոյն ու հրեայ ուրիշ խմբագիրներ, զինուորական ատեանին դիմելով, խնդրեր են Ահմէտ Ճէվատէդ պէյի վերադարձը արտօնել, վասն զի անմեղ և գովելի ծառայութիւններ մատուցած անձ մըն է։

ՀԱՐԹԵՔ.—Խասգիւղ, Եէնի Մահալլէ, Պարոնեաններու սեփական և գերմանացի ընտանիքի մը ընակած քարուկիր տունէն, երէկ հրդեհ ծագեցաւ, սակայն անմիջական օգնութեանց շնորհիւ, շուտով առաջքը առնուեցաւ։

ՅՈՒԼԻՍ 10Ի ԽՐԱԽՃԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Քաղաքապետական Ընդհ. Ժողովը իր երէկուան նիստին մէջ զբաղեցաւ Սահմանադրութեան տարելիցին առթիւ կատարուելիք խրախճանութեանց կազմակերպութեամբ։ Սէրայ Պրունին չբնդունելի պիտի լուսաւորուի Պոլսոյ Քաղաքապետութեան կողմէ. իսկ Տօլմա-Պաղչէի պալատան լուսաւորութիւնն ալ կայսեր կողմէ։ Ամենէն աւելի կարեւորութիւն պիտի տրուի Տօլմա-Պաղչէի, Սէրայ Պրունիի, Դատարգիւղի, Հայատար Փաշայի, Սկիւտարի, Գրդգուլէսիի և նեղուցներուն լուսաւորութեանց։ Սէրայ Պրունիի առջեւ երկու տեղեր պիտի յատկացուին՝ այրերու և կիներու համար զատ. մուտքը ձրի պիտի ըլլայ և տոմակներ պիտի բաժնուին նախապէս։ Ծովեզերքը երկաթէ թելերով պիտի պաշտպանուի, արկածի տեղի չտալու համար։ Սէրայ Պրունիի ամէն կողմերն ալ ձրիապէս տրամադրելի պիտի ըլլան, այրերու և կիներու վայրերը միչտ իրարմէ անջատ։ Սէրայ-Պրունիի մէջ պիւֆէ ալ պիտի գտնուի. փափագողներուն ձրիապէս պիտի յանձնուի պիւֆէին մատակարարութիւնը, պայմանաւ որ 15,000 աթոռ տրամադրելի ըլլայ։ Սէրայ Պրունիի յարմար վայրերը բարձրաւանդակներ պիտի չինուին։ Զինուորական նուագախումբեր ալ պիտի նուագեն։ Սահմանադրութեան տարեդարձին օրը, որոշեալ տեղերէ թնդանօթի 21 հարուածներ պիտի արձակուին։

ՆՈՐ ԶԱՐԴԱՐՈՒ ԶԲՈՑՆԵՐԸ.— Եբէկ Ղալաթիոյ Սակարանին մէջ զրոյց կը չրջէր թէ նախ Սըվազի և յետոյ Մալաթիոյ մէջ ջարդը սկսած է։ Եէնի Կազէթա այդ մասին տեղեկութիւններ ուզած ըլլալով Բ. Դռնէն, իրեն պատասխանուած է թէ բոլորովին անհիմն են տարածուած զրոյցները։

«ԳՈՒՐՆԱԼ»ՆԵՐԸ.— Եըլտըզի պալատան առջեւ կատարուած պօմպայի փորձէն յետոյ 1414 ժուրնալներ արգիլած են, որոնց 1000ը Թուրքերու, 400ը՝ Հայերու և 3ը Յոյներու կողմէ, իսկ մնացեալ 11ը օտարազգիներու կողմէ։ Կան ժուրնալներ ալ որոնք տեղացիներու կողմէ պատրաստուած չեն։

ԹԱՐՍՈՒՍԻ գայմագամ անուանուեցաւ Դոշկիրի նախորդ գայմագամ Մէհմէտ Բէուֆ պէյ։

ՕՍՄ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ Պարսկաստանի մէջ ունեցած իր հիւպատոսարանները պաշտպանելու համար, մէկ քանի ջոկատ զօրք ղրկած է։ Ուրմիայի մէջ 90 թուրք զինուոր կը գտնուին։ Ուրիշ տեղեր աւելի քիչ է օսմ. զօրքերու թիւը։ Կը հերքուի այն լուրը թէ Ռուսիա ծանուցագիր մը տուած ըլլայ Բ. Դրան՝ հարցնելով թէ ինչո՞ւ համար Թուրքիա իր զօրքերուն թիւը կ'աւելցնէ Սալմասի և Ուրմիայի մէջ։

ՏՕԼՄԱ-ՊԱՂՉԷԻ պալատան բարձր պատը, որ մինարէի մը բարձրութեան հասցուած էր բռնապետութեան օրով, կը փլցուի երէկուընէ ի վեր։ Այդ պատին փլցուելէն յետոյ՝ Թրամուէյի ճամբէն պիտի տեսնուի պալատը, որ կարմիր աւ ճերմակ գոյներով ներկուած է։

ՍԽԱԼ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Կարծողներ կան թէ Դաւթեան գրծակալութիւնը թաքուն, խորհրդաւոր, անհասանելի միջոցներ ունի պաշտօն գրանելու համար անոնց որ իրեն կը դիմեն։

Հազիւ պէտք կայ յայտարարելու թէ ասիկա սխալ՝ որքան անհիմն կարծիք է։ —Հրաշքի դարերուն մէջ չենք ապրիր։

Գործ գտնելու համար մեր միջոցները շատ պարզ են։ Պէտք ունեցողները անձամբ կը ներկայանան արձանագրուելու համար, միայն 5 ղրշ. վճարելով։ Դիմողները իրենց կարողութեան և արժանիքին համեմատ, կ'առաջարկուին պատրաստ կամ ներկայանալիք պաշտօններուն, որոնց բանակցութիւնները կատարելու և պայմանները ճշդելու համար գործակալութիւնը կը ստանայ, իբր յանձնարարող-չէք, որոշուած ամսականին հաւասար գումար մը։

Սմբատ Դաւթեան

ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿՈՄԿՈՒՆԻՍՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՕՐԱԹԵՐԹ

Երևան, 3/16 հոկտեմբերի 1929 թվականի

ԱՄՍԱԿԱՆ ԳՆԱՅԻՆ ՑԱՆԿ

Օտար. Գլխադրամ	%	Ս.	101 29½
Ընդհանուր վարկի գրքույկներ	»	»	101 30½
Ընդհանուր վարկի գրքույկներ	»	»	101 28½
Գյուղատնտեսական գրքույկներ	»	»	174 62
Գյուղատնտեսական գրքույկներ	»	»	174 62
Գյուղատնտեսական գրքույկներ	»	»	174 —

ՓԱՅԼԱՅԻՆ, Ցուրբան 2/15

ԴՈՒՐՍ ՏՍԿՎԾՈՂՆ

«Ամերիկայի Միացյալ Նահանգներ» — Հոկտեմբերի 4-ին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամենամեծ դուրսանցումը եղավ Նյույորքի ֆոնդային բորսայում։ Գները իջան 16,000 մասնակցի։ — **ԴՈՒՐՍԱԿԱՆ։**

«Ամերիկայի Միացյալ Նահանգներ» — Ամերիկայի Միացյալ Նահանգներում գյուղատնտեսական գրքույկների գները բարձրացել են։ Գները բարձրացել են 30,000 գրքույկի համար։ Ամենամեծ գրքույկը գնվել է 16,000 գրքույկ։ — **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ

ՊԷՏՔԸՐ ԿԱՃԱՌԱՑՈՒՆ

241 370 500 ԲԵՐԱ 500 370 241

ԱՆԿՈՂՆԻ ԿԱԶՄԱԾՆԵՐ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԱՌԱՐԿԱՆԵՐ

ՄԵԾ ՄԹԵՐՔ ՓԱՑՏԷ, ԵՐԿԱԹԷ ԵՒ ԱՆԱԳԱՊՂԻՆՁԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՒ,
ՏՂՈՑ, ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԵՒ ՕԹԷԼԻ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐՈՒ

ԲԱՑՈՒՄ ԱՅՐԵՐՈՒ, ՄԱՆՉԵՐՈՒ ԵՒ ՓՈՔՐ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ՊԱՏՐԱՍՏ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ ՃԻՒՂԻՆ



ՄԵԾ ԺԱՄԱՆՈՒՄ ՆՈՐ ԶԳԵՍՏԵՂԷՆՆԵՐՈՒ

ԱՅՐԵՐՈՒ, ՄԱՆՉԵՐՈՒ ԵՒ ՓՈՔՐ ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ
ՎԱՃԵԼՈՒՉ ՁԵՒԵՐՈՎ ԵՒ ՎԵՐՋԻՆՆՈՐԱՁԵՒՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ